ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՀՈՎԻՏ ՀԱՄՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7-Ա

20.07.2020թ.

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> և << Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին >> ՀՀ օրենքներով, հաշվի առնելով , որ մինչև 2010 թվականին << Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին >> ՀՀ օրենքի ընդունումը ,մարզպետների կառավարմանը հանձնված տարածքները նախկինում ՀՀ նախարարների խորհուրդի համապատասխան որոշումներով մշտապես կցվել և օգտագործվել են համայնքների կողմից , սակայն 2010 թվականին ընդգրկվել են այլ համայնքների վարչական տարածքում , որի հետևանքով առաջացել են բազում խնդիրներ , որոնք հրատապ լուծման կարիք ունեն

Լուսահովիտ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հարցի կարգավորման համար առաջարկել համայնքի ղեկավարին ձեռնարկելու համապատասխան միջոցներ :

2.Հաշվի առնելով , որ Լուսահովիտ համայնքի կողմից մշտապես օգտագործվող հեռագնա սարամասերն ընտգրկվել են Լուսահովիտ համայնքի վարչական

սահմաններում , դիմել համայնքի ավագանիներին , տալու համաձայնություն <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային ստորաբաժանման մասին>> ՀՀ օրենքում , սահմանված կարգով, ըստ սարամասերի նախկին օգտագործման սահմանների , փոփոխություններ կատարելու համար օրենքի նախագիծ ՀՀ կառավարություն ներկայացնելու համար :

3.հայտնում ենք մեր պատրաստակամությունը , անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տրամադրել հողատարածքների հատակագծերը :

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Լուսահովիտ համայնքի ավագանիներ

Ա. Գուլակյան /կողմ / ստորագրություն

Ք. Բեգլարյան /կողմ / ստորագրություն

Ա. Սարհատյան /կողմ / ստորագրություն

Ռ. Սարհատյան / կողմ / ստորագրություն

Ա. Սարհատյան / կողմ / ստորագրություն

Լուսահովիտ համայնքի ղեկավար Գ. Սարհատյան